ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ
2025 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 3 նիստի

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ- **Հրավիրյալ պրոֆեսորի այցի արդյունքների մասին Տ. Միմյանի հաղորդումը:**

Նշվեց, որ Թուրինի համալսարանի պրոֆեսոր Մասսիմո Լեոնեն ԵՊՀ ներքին դրամաշնորհի շրջանակում 30 ժամ դասախոսել է 4-րդ կուրսում: Ուսանողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել դասախոսությունների նկատմամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ա. Մենեմշյան, Դ. Պետրոսյան, Ա. Երզինկյան, Զ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- **«Լրագրություն» կրթական ծրագրի բարելավման աշխատանքների մասին ծրագրի ղեկավար Ա. Մենեմշյանի հաղորդումը:**

Ա. Մենեմշյանը նշեց, որ 2025թ. հոկտեմբերից մեկնարկել են ԵՊՀ «Լրագրություն» բակալավրի կրթական ծրագրի բարելավման աշխատանքները, որոնք այս փուլում կենտրոնացել են ծրագրի միջազգային համադրելիության գնահատման և տվյալահեն վերլուծական հիմքի ձևավորման վրա: Կատարվել է միջազգային բենչմարք՝ ShanghaiRanking-ի Communication (Journalism & Media) ուղղության առաջատար 30 համալսարանների բակալավրի կրթական ծրագրերի համադրական ուսումնասիրությամբ:

Աշխատանքային խումբը վերլուծել է նշված համալսարանների համապատասխան կրթական ծրագրերի կառուցվածքը, նպատակներն ու վերջնարդյունքները, ինչպես նաև առարկայական ցանկերը: Բենչմարքի շրջանակում քարտեզավորվել են ծրագրի բարելավման ենթակա 17 դասընթացներին համարժեք միջազգային մոդուլները, հավաքագրվել և համակարգվել են հասանելի ուսումնական պլանները, որոնք տեղադրվել են ընդհանուր աշխատանքային առցանց հարթակում: Բոլոր նյութերը թարգմանվել և փոխանցվել են նաև միջազգային փորձագետին խորհրդատվության համար:

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ԵՊՀ «Լրագրություն» կրթական ծրագիրը իր հիմնական կառուցվածքով և թեմատիկ ուղղություններով ընդհանուր առմամբ համադրելի է միջազգային առաջատար ծրագրերին: Միևնույն ժամանակ ի հայտ են եկել մի շարք բովանդակային բացեր՝ մասնավորապես տվյալների լրագրության, սոցցանցային լրագրության, AI-ի կիրառման, լսարանի վերլուծության և միջմշակութային հաղորդակցության ուղղություններով, որոնք պահանջում են համակարգային վերանայում:

Այս փուլում կատարված աշխատանքները ստեղծել են ամուր, տվյալահեն հիմք ծրագրի բովանդակային վերափոխման հաջորդ փուլի համար, որը կիրականացվի դասախոսների անմիջական մասնակցությամբ:

Բոլոր 17 դասընթացների դասախոսներին ուղղվել է պաշտոնական նամակ, որով նրանց տրամադրվել է մուտք միջազգային բենչմարքի նյութերին և բացվել է իրենց դասընթացների ուսումնական պլանները խմբագրելու հնարավորություն: Դասախոսներին առաջարկվել է մինչև դեկտեմբերի վերջ վերանայել և արդիականացնել դասընթացների նպատակները, վերջնարդյունքները, թեմատիկ կառուցվածքը և գրականության ցանկը՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Ք. Ալազուլյան, Ն. Վարդանյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- **Բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարներին հաստատելու հարցը:**

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ 2025/26 ուստարում հեռակա ուսուցման 5-րդ կուրսում սովորում է 12 ուսանող, ապա առաջարկեց հաստատել ավարտական աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարներին:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաստատել ներկայացված թեմաները և գիտական ղեկավարներին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- **Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին Դ. Պետրոսյանի և Տ. Սիմյանի հաղորդումը:**

Դ. Պետրոսյանը և Տ. Սիմյանը տեղեկացրին, որ գործընթացը բնականոն հունով ընթանում է, պարբերաբար ամբիոններում հանդիպումներ են տեղի ունենում գիտական ղեկավարների հետ:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Մարտիրոսսյան, Ա. Մենեմշյան, Ս. Պետրոսյան, Վ. Պետրոսյան, Ք. Ալազուլյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- **Մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին «Հեռուստալրագրություն» կրթական ծրագրի ղեկավար Ն. Վարդանյանի հաղորդումը:**

Ն. Վարդանյանը նշեց, որ առաջիկայում ԵՊՀ ուսուցման էլեկտրոնային կառավարման հարթակում կբացվի մագիստրոսական թեզերին վերաբերող հատվածը: Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս թեզերի ատեստավորումը իրականացվելու է այդ հարթակում: Նա ներկաներին տեղեկացրեց, որ գործընթացը դարձյալ փուլային է լինելու՝ վերջնաժամկետների հստակ պահպանմամբ:

Վարդանյանը հորդորեց խստորեն հետևել դրանց՝ հնարավոր խնդիրներից խուսափելու համար:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Ք. Ալազուլյան, Մ. Կարապետյան, Զ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ